

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2021թ. ապրիլի 22-ի թիվ 6/3.1 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Գ.Գ.Գևորգյան
«22» ապրիլի 2021թ.

Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԶԵՎՈՎ) 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգն ու պայմանները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կարգը, ԵՊՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Առկա ուսուցման ձևով ԵՊՀ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

4. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ԵՊՀ ռեկտորի ղեկավարությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտորը, ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի վարիչը: Դիմորդների գործերն ընդունելու նպատակով ստեղծվում է մագիստրատուրայի ընդունելության հանձնաժողովի օժանդակ համակարգ:

Մագիստրատուրայի ընդունելության հայտերն ուսումնասիրելու, քննությունների արդյունքներն ամփոփելու և դիմորդների ընդունելության վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով ԵՊՀ ռեկտորի հրամանով ստեղծվում է մանդատային հանձնաժողով՝ համապատասխան պրոռեկտորի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետը, ֆակուլտետների ղեկանները (ինստիտուտների և կենտրոնների տնօրենները) և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի վարիչը:

Ընդունելության քննությունների անցկացման նպատակով ԵՊՀ ուսումնական գործընթացը համակարգող համապատասխան պրոռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ներգրավվում են տվյալ ֆակուլտետի ղեկանը,

համապատասխան մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները և ընդունող հանձնաժողովի ներկայացուցիչը (ըստ անհրաժեշտության):

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է՝

ա) ընդհանուր հիմունքներով (կարող են դիմել միայն ԵՊՀ շրջանավարտները համաձայն Կարգի)

բ) հարցազրույցով՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. ապրիլի 28-ի №700-Ն որոշմամբ սահմանված կարգի:

5. ԵՊՀ մագիստրատուրայում ընդունելությունը կատարվում է երկու փուլով:

6. 2021-2022 ուսումնական տարվա համար մագիստրատուրայի ընդունելության **առաջին փուլի** փաստաթղթերն ընդունվելու են առցանց եղանակով՝ <https://admission.y-su.am/> կայքի միջոցով, ընթացիկ տարվա հունիսի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա հուլիսի 5-ին և 6-ին, իսկ անվճար և վճարովի ուսուցման տեղերի համար մրցույթի արդյունքներն ամփոփվելու են ընթացիկ տարվա հուլիսի 8-ին:

6.1. Ընդունելության առաջին փուլում անվճար և վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող է մասնակցել ԵՊՀ բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ձևերի տվյալ (նույն) մասնագիտությամբ վերջին երեք տարվա շրջանավարտները (2019թ., 2020թ., 2021թ.), որոնց ամփոփիչ ատեստավորման գնահատականը 13 և բարձր միավոր է, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) առնվազն 13 միավոր է: Դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննության, մրցութային հիմունքներով՝ մանդատային հանձնաժողովի՝ եզրակացության հիման վրա: Դիմորդների հավասար ՄՈԳ-երի դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափորոշիչները՝

ա) գերազանցության դիպլոմի առկայությունը,

բ) ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

Անվճար տեղերի համար հայտարարված ընդունելության մրցույթը չհաղթահարելու դեպքում 1-ին փուլի դիմորդները ընդունվում են նույն կրթական ծրագրի վճարովի համակարգ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ավարտած բակալավրիատի շրջանավարտները կարող են մասնակցել մագիստրատուրայի 1-ին փուլի մրցույթին **միայն** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին հատկացված անվճար տեղերի շրջանակում: Մրցույթը չհաղթահարած դիմորդները մանդատային հանձնաժողովի եզրակացությամբ ընդունվում են նույն կրթական ծրագրի վճարովի համակարգ:

ԵՊՀ-ում միայն մագիստրատուրայի կրթական ծրագրով գործող մասնագիտությունների՝ **«Տեղեկատվական համակարգեր»** (Տեղեկատվական համակարգերի մշակում, Տեղեկատվական համակարգերի կառավարում), **«Վիճակագրություն»** (Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն), **«Կրթական գիտություններ»** (Կրթության կազմակերպում), **«Հայագիտություն»** (Հայագիտություն, Միյուռքագիտություն), **«Եվրոպագիտություն»** (Եվրոպագիտություն), **«Հասարակայնության հետ կապեր»** (Հասարակայնության հետ կապեր /Մոց./), **«Մարդկային ռեսուրսների կառավարում»** (Մարդկային ռեսուրսների կառավարում), **«Միջազգային հարաբերություններ»** (Ցեղասպանագիտություն, Ամերիկագիտություն), **«Արևելագիտություն»** (Թալիշագիտություն և քրդագիտություն), **«Տնտեսագիտություն»** (Տվյալների գիտությունը բիզնեսում) կրթական ծրագրերով անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ընդունելությունը կատարվում է բացառապես **քննության արդյունքների հիման վրա**՝ մրցութային կարգով: Մրցույթին կարող է դիմել ԵՊՀ (այդ թվում նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի) և ՀՀ այլ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող վերջին երեք տարվա շրջանավարտները (2019թ., 2020թ., 2021թ.), որոնց ամփոփիչ ատեստավորման գնահատականը 13 և բարձր միավոր է, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) առնվազն 13 միավոր է:

6.2. Ընդունելության առաջին փուլում (տե՛ս Աղյուսակ 1.)՝

ա) «Աստվածաբանություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Աստվածաբանություն» և «Եկեղեցաբանություն» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

բ) «Հնագիտություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Պատմություն» և «Մշակութաբանություն» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

գ) «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

դ) «Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն)» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Օտար լեզու և գրականություն» /ըստ լեզուների/ մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

ե) «Լեզվաբանություն» մասնագիտության «Կիրառական լեզվաբանություն» կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն լեզու)» և «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

զ) «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Ռուսաց լեզու և գրականություն» և «Միջմշակութային հաղորդակցություն (ռուսաց լեզու)» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

է) «Իրավագիտություն» մասնագիտության անվճար կամ վճարովի ուսուցման համակարգերով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն «Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները:

ը) «Արևելագիտություն» մասնագիտության «Կիրառական արաբագիտություն», «Թյուրքական պատմաբանասիրություն» և «Իրանական պատմաբանասիրություն» կրթական ծրագրերի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Արևելագիտություն» մասնագիտությամբ բակալավրիատի համապատասխանաբար՝ «Արաբագիտություն», «Թյուրքագիտություն» և «Իրանագիտություն» կրթական ծրագրերի բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

թ) «Բարոյագիտություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

ժ) «Զբոսաշրջություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Մերվիս» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

ի) «Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում» մագիստրոսական կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն «Ռադիոֆիզիկա» մասնագիտությամբ «Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում» մասնագիտացման բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

լ) «Ֆարմացիա» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Ֆարմացիա» և «Դեղագործական քիմիա» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները, իսկ վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին նաև հարակից մասնագիտությունների կրթական ծրագրերի շրջանավարտները: Հարակից մասնագիտությունների ցանկը հաստատում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը:

իւ) «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Ինֆորմատիկա (Համակարգչային գիտություն)» մասնագիտությունների անվճար համակարգի մրցույթներին կարող են մասնակցել «Ինֆորմատիկա (Համակարգչային գիտություն)» և «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

ծ) «Կիրառական մանրէաբանություն» և «Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրերի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթներին կարող են մասնակցել «Կենսաբանության» և «Կենսաքիմիա» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

6.3. Դիմորդների ոչ բավարար քանակի դեպքում (ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի 1-ին կետի պահանջներ) տվյալ կրթական ծրագիրը չի բացվում, իսկ 1-ին փուլի ընդունելության արդյունքում այդ ծրագրի անվճար համակարգ ընդունված ուսանողը կցագրվում է հարակից մասնագիտության կրթական ծրագրին:

7. Մագիստրատուրայի ընդունելության **երկրորդ փուլի** փաստաթղթերն ընդունվելու են առցանց եղանակով՝ <https://admission.yసు.am/> կայքի միջոցով ընթացիկ տարվա հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 20-ը: Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա օգոստոսի 26-ին և 27-ին:

7.1. Երկրորդ փուլում ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգի համար: Այս փուլում ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ-ի և այլ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա և հեռակա ուսուցման ձևերի) բակալավրիատի, մագիստրատուրայի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

Այլ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա և հեռակա ուսուցման ձևերի) բակալավրիատի, մագիստրատուրայի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտների ընդունելությունը կատարվում է միայն քննությամբ՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

ԵՊՀ վերջին երեք տարվա շրջանավարտների (2019թ., 2020թ., 2021թ.) ընդունելությունը, որոնց ամփոփիչ ատեստավորման գնահատականը 13 և բարձր միավոր է, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) առնվազն 13 միավոր է, տվյալ (նույն) մասնագիտության վճարովի ուսուցման համակարգում կատարվում է առանց ընդունելության քննության, մրցութային հիմունքներով, մանդատային հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ բացառությամբ սույն կարգի 6.1. կետում նշված մասնագիտությունների:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին 3 տարվա (2019թ., 2020թ., 2021թ.) ընթացքում զորացրված ԵՊՀ բակալավրիատի շրջանավարտների տվյալ (նույն) մասնագիտությամբ ընդունելությունը կատարվում է հարցազրույցով:

13-ից ցածր ՄՈԳ ունեցող և դիմորդների ընդունելությունը տվյալ (նույն) մասնագիտության վճարովի ուսուցման համակարգում կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի կրթական ծրագրին համապատասխան հարցաշարով անցկացված քննության արդյունքների հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունները:

1-ին փուլի ընդունելության մրցույթի պահանջներին բավարարող, սակայն դիմելու ժամկետը բաց թողած դիմորդները 2-րդ փուլի վճարովի ուսուցման համակարգ են ընդունվում առանց ընդունելության քննության:

8. Մասնագիտության փոփոխության դեպքում ԵՊՀ շրջանավարտների մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է միայն վճարովի ուսուցման համակարգում՝ տվյալ մասնագիտության բակալավրիատի ծրագրին համապատասխան կազմված հարցաշարով անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունները:

9. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդները պարտավոր են վճարել ուսման վարձավճարը (մագիստրատուրայի համապատասխան մասնագիտության 1-ին կուրսի 1-ին կիսամյակի համար նախատեսված ուսման վարձի առնվազն 25%-ը, 1-ին փուլում

ընդունվածները՝ մինչև ընթացիկ տարվա հուլիսի 15-ը, 2-րդ փուլում ընդունվածները՝ մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը), որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական կրթական ծրագրերի:

10. Դիմորդը կարող է հրամանագրվել առկա համակարգում գործող միայն մեկ մասնագիտությամբ:

11. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածում կամ պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք ԵՊՀ-ում առկա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունվել և սովորել չեն կարող:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԻՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

12. Մագիստրատուրայի ընդունելության համար դիմորդները պետք է սքանավորեն և մուտքագրեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) մագիստրատուրայի ընդունելության լրացված դիմում-հայտ, որտեղ դիմորդը, ըստ նախապատվության, կարող է նշել առավելագույնը 2 մագիստրոսական կրթական ծրագիր: Նշված առաջին ծրագրի չբացվելու դեպքում դիմորդը մասնակցում է իր կողմից նշած երկրորդ կրթական ծրագրի մրցույթին,

բ) բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի բնօրինակներն ու պատճենները, (ԵՊՀ 2021թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած) ներկայացնում են ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված ֆակուլտետի կողմից, իսկ ՀՀ այլ ԲՈՒՀ-երի 2021թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած)՝ տվյալ ԲՈՒՀ-ի ռեկտորի ստորագրությամբ տեղեկանք բակալավրիատի շրջանավարտ լինելու մասին և ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված),

գ) արտասահմանյան ԲՈՒՀ-ի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիմորդը դիպլոմի հետ պետք է ներկայացնի նաև «Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին,

դ) 2 լուսանկար (3x4 չափսի),

ե) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) բնօրինակն ու պատճենները (1-4-րդ և 18-19-րդ էջերը),

զ) աձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակն ու պատճենը,

է) ընդունելության ծառայությունների համար գանձվող 1500 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

13. Ընդունելության հրամանը ստանալուց հետո համապատասխան ֆակուլտետի գործավարը հավաքագրում է ուսանողի առցանց մուտքագրած փաստաթղթերը և կազմում է ուսանողի անձնական գործ: Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետը ուսանողից կարող է պահանջել սքանավորած փաստաթղթերի բնօրինակներն ու պատճենները:

Աղյուսակ 1. Առաջին փուլում անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթի մասնակցության բացառություններ (Կետ. 6.2)

Մագիստրոսական մասնագիտություն /կրթական ծրագիր	Կարող են դիմել ԵՊՀ բակալավրիատի մասնագիտություն/կրթական ծրագիր
Աստվածաբանություն	Աստվածաբանություն Եկեղեցաբանություն
Հնագիտություն	Պատմություն Մշակութաբանություն
Հաշվապահական հաշվառում և հարկում	Տնտեսագիտություն Ֆինանսներ
Լեզվաբանություն (Միջմշակութային հաղորդակցություն՝ գերմաներեն)	Օտար լեզու և գրականություն (Գերմաներեն լեզու և գրականություն)
Լեզվաբանություն (Միջմշակութային հաղորդակցություն՝ ֆրանսերեն)	Օտար լեզու և գրականություն (Ֆրանսերեն լեզու և գրականություն)
Լեզվաբանություն (Միջմշակութային հաղորդակցություն՝ իսպաներեն)	Օտար լեզու և գրականություն (Իսպաներեն լեզու և գրականություն)
Լեզվաբանություն (Միջմշակութային հաղորդակցություն՝ իտալերեն)	Օտար լեզու և գրականություն (Իտալերեն լեզու և գրականություն)
Լեզվաբանություն (Կիրառական լեզվաբանություն)	Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն լեզու) Անգլերեն լեզու և գրականություն
Օտար լեզու և գրականություն (Ռուսաց լեզու և գրականություն)	Ռուսաց լեզու և գրականություն Միջմշակութային հաղորդակցություն (ռուսերեն)
Արևելագիտություն (Կիրառական արաբագիտություն)	Արևելագիտություն (Արաբագիտություն)
Արևելագիտություն (Թյուրքական պատմաբանասիրություն)	Արևելագիտություն (Թյուրքագիտություն)
Արևելագիտություն (Իրանական պատմաբանասիրություն)	Արևելագիտություն (Իրանագիտություն)
Բարոյագիտություն	Փիլիսոփայություն
Զբոսաշրջություն	Մերվիս
Գերմեծ ինտեգրալ սիսեմաների նախագծում	Ռադիոֆիզիկա/ (Գերմեծ ինտեգրալ սիսեմաների նախագծում)
Ֆարմացիա	Ֆարմացիա Դեղագործական քիմիա
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) Տեղեկատվական անվտանգություն
Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) Տեղեկատվական անվտանգություն
Կիրառական մանրէաբանություն	Կենսաբանություն Կենսաքիմիա
Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա	Կենսաբանություն Կենսաքիմիա

